




ԱԳՐՈԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐՈՎԵՆՄԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Հայաստանը քաղաքակրթության հնագույն կենտրոններից է, ինչը հաստատվել է անգամ համաշխարհային գիտության կողմից: Գիտնականները նաև նշում են, որ մեր երկիրը վաղ երկրագործական մշակաբույսերի տարածման օջախներից է: Համապատասխան փաստերը հուշում են, որ Հայկական լեռնաշխարհում էթնոբուսաբանական նյութերի տարիքը թվագրվում է մ.թ.ա 8-րդ, իսկ մշակովի բույսերի և դրանց վայրի ցեղակիցների ածխացած մնացորդների տարիքը՝ մ.թ.ա 5-րդ հազարամյակով: Բուսաբաններն էլ, իրենց հերթին, առաջ են քաշում այն տեսակետը, որ երկրագործությունը շուրջ վեց հազարամյակ զարգացել է տեղական վայրի բույսերի գենետիկ ռեսուրսների հարուստ հիմքի վրա, և դրանց մշակումը եղել և այսօր էլ մնում է հայ ժողովրդի հիմնական զբաղմունքներից մեկը (հացահատիկային կուլտուրաների մշակում, խաղողագործություն, պտղաբուծություն): Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով, հետևաբար, և իր մասնագիտացված դերով: Հայաստանում ձևավորված 10 լանդշաֆտակլիմայական գոտիներին բնորոշ պայմանները նպաստել են բուսական ու կենդանական տեսակների բնակության

Ինչ է Էնդեմիկ բույսը

- Էնդեմիկ բույսեր, բնաշխարհիկ բույսեր աշխարհագրական որևէ ոչ մեծ տարածքում սահմանափակորեն տարածված բույսեր: Բաժանվում են երկու խմբի՝ պալեո- և նեո-էնդեմիկներ: ՀՀ տարածքում բուսաբան-կարգաբանների կողմից տարբեր ժամանակներում (առաջին անգամ) բացահայտվել և նկարագրվել է շուրջ 400 տեսակ, որոնցից 115-ը հանդիպում է միայն Հայաստանում (285-ը հայտնաբերվել է նաև հարևան երկրներում):

միջավայրերի մեծ բազմազանության առաջացմանը, որի արդյունքում առկա են՝ ինքնատիպ համակեցություններ, էնդեմիզմի բարձր մակարդակ և հարուստ ագրոկենսաբազմազանություն: Հայաստանում հայտնաբերված են մշակաբույսերի մեծ քանակի վայրի ցեղակիցներ (հացազգիներ, պտղատու ծառեր և այլն), որոնք գենետիկական նյութի առանձնահատուկ աղբյուր են հանդիսանում: Հայաստանի տարածքը դեռևս Ն.Ի.Վավիլովի կողմից գնահատվել է որպես մշակաբույսերի առաջացման հարուստ օջախներից մեկը: Այս հարուստ գենոֆոնդը օգտագործվում է բուժիչ, երաշտադիմացկուն, ցրտադիմացկուն և օգտակար այլ հատկանիշներով օժտված նոր սորտերի ստացման համար: Ներկայումս հանրապետության տարածքը պատկանում է մշակաբույսերի (փափուկ և կարծր ցորեն, ոլոռ, ոսպ, խաղող) առաջացման Առաջավոր Ասիական կենտրոնին, որն առաջին հերթին առանձնանում է ցորենի տեսակների և էկոտիպերի բազմազանությամբ: Գիտությանը հայտնի ցորենի չորս վայրի տեսակներից Հայաստանի տարածքում աճում է երեքը՝ վայրի միահատիկը, ուրարտու միահատիկը և վայրի երկհատիկավոր արարատյանը:



Հայաստանի հարուստ ագրոկենսաբազմազանությունը, ունենալով էկոհամակարգերի կայունությունը և կենսազանգվածների ամբողջականությունն ապահովող բարձր հատկանիշներ, հանդիսանում է նաև երկրի տնտեսական զարգացման նախապայմանը: Առկա վայրի օգտակար բույսերից և կենդանիների էնդեմիկ ցեղերի ներկայացուցիչներից կախման մեջ են գտնվում գյուղատնտեսության այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են՝ բուսաբուծությունը, անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնաբուծությունը, թեթև և սննդարդյունաբերության որոշ կարևոր բնագավառները: Անգնահատելի է ագրոկենսաբազմազանության դերը էկոհամակարգային ծառայությունների քանակական և որակական հատկանիշների պահպանման գործում, հատկապես՝ մշակաբույսերի և ընտանի կենդանիների գենոֆոնդի պահպանության, սելեկցիայի, դեղամիջոցների ստացման և կենսատեխնոլոգիաների միջոցով նոր նյութերի արտադրման համար՝ որպես բնակչության կենսապահովման նախապայման: Բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսների պահպանման ու կայուն օգտագործման նշանակությունը գնալով էլ ավելի է մեծանում և աստիճանաբար դառնում գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտում



- ՀՀ-ում բնակվում է սողունների 53 և երկկենցաղների 8 տեսակ: Այստեղ բնակվում են ջրային կրիաների՝ 2, ցամաքային կրիաների՝ 1, մողեսների՝ 26, վիշապների՝ 1, կոյր օձերի՝ 1, իծերի՝ 4 տեսակներ:
- Հայաստանում հանդիպում են թռչունների 349 տեսակ, որոնցից մեծ թիվ են կազմում ճնճղուկանմանները:



վարվող քաղաքականության կարևոր բաղադրիչը: Պարենի և գյուղատնտեսության համար օգտագործվող գենետիկական ռեսուրսների պահպանումն ու օգտագործումն իրականացվում է գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությամբ սահմանված առաջնությունների համաձայն, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում մշակաբույսերի տեղական հին սորտերի և մշակաբույսերի վայրի ազգակիցների պահպանմանը, գենետիկական բանկի հնարավորությունների ընդարձակմանը, տնտեսական արժեք ներկայացնող տեսակների պլանտացիաների և բուծարանների ստեղծմանն ու բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործմանը: Հայաստանի բույսերի գենետիկական ռեսուրսները ներկայացված են հիմնականում հացահատիկային, հատիկաբերողներ, կերային, բանջարաբուստանային և յուղատու բույսերի խմբերին պատկանող տեսակներով: Հայաստանում հացահատիկային մշակաբույսերն (ցորեն, գարի, հաճար) ունեն ռազմավարական նշանակություն և գերակշռում են ինչպես ցանքատարածությունների կառուցվածքում, այնպես էլ՝ սերմերի հավաքածուներում: Վայրի հացազգիներից Հայաստանի տարածքում աճում է վայրի ցորենի երեք, այծակնի ինը, աշորայի երկու և վայրի գարու ութ տեսակ, որոնք աչքի են ընկնում իրենց ներտեսակային հարուստ բազմազանությամբ և համարվում են չորային կլիմայի, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկունության և այլ հատկանիշների գեների կրողներ: Հանդիպում են նաև հատիկաբերողներ



մշակաբույսերի բազմաթիվ աբորիգեն ձևեր և վայրի տեսակներ. Հայաստանի առաջնային նշանակություն ունեցող բանջարանոցային մշակաբույսերի շարքում են՝ պոմիդորը, կաղամբը, վարունգը, գլուխ սոխը, բադրիջանը, տաքդեղը, որոնց բաժինն ընդհանուր բանջարաբույսերի մեջ կազմում է 61,9%: Հայաստանի տարածքը

հանդիսանում է նաև մի շարք բանջարանոցային բույսերի առաջացման առաջնային և երկրորդական կենտրոն, քանի որ բանջարաբուստանային մշակաբույսերի գերակշռող մասը Հայաստանում ևս ներկայացված է վայրի ցեղակիցներով (280 տեսակ): Պտղահատապտղայինները բավական հարուստ են ներկայացված Հայաստանում և հիմնականում պատկանում են վարդազգիների ընտանիքին (Rosaceae), որոնց վայրի ցեղակիցների գենոֆոնդի պահպանությունը կարևոր խնդիր է ազգային և գլոբալ մակարդակներում: Կերային բույսերը ներկայացված են դաշտավուկազգիների (Poaceae) և բակլազգիների (Fabaceae) ընտանիքներով, որոնք ներառում են բազմաթիվ տեսակներ, էկոտիպեր և ձևեր: Միայն բակլազգիների /Fabaceae/ ընտանիքի կազմում 346 տեսակի բույսեր են գրանցված Հայաստանում: Բանջարաբուստանային մշակաբույսերից սահմանափակ քանակությամբ մշակվում են վարունգի, տաքդեղի, բադրիջանի, 49 լոբու, կաղամբի, գազարի, ծնեբեկի, գլուխ սոխի, սելի տեղական սորտ-պոպուլյացիաները: Հանրապետությունում մշակվող գրեթե բոլոր համեմունքային տերևաբանջարների սորտերն ունեն տեղական ծագում: Հայկական

բարձրավանդակը, հանդիսանալով մշակաբույսերի առաջացման կենտրոններից մեկը, հայտնի է նաև պտղատուների ավանդական սորտային բազմազանությամբ: Մասնավորապես՝ խնձորենու (40), տանձենու (15), ծիրանենու (15), դեղձենու (8), սալորենու, բալենու մի քանի սորտ-պոպուլյացիաները եզակի առանձնյակների ձևով պահպանվել են անհատական տնտեսություններում: Հարկ է նշել, որ տեղական սորտերի մեծ մասը գրեթե չի պահպանվել սերմային հավաքածուներում, ուստի դրանց պահպանման համար անհրաժեշտ է հատուկ ծրագրերի մշակում ու իրականացում՝ արտերկրի գենետիկական բանկերից դրանց ներմուծման և տեղում բազմացման միջոցով:

ՄԱՐԴՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎՐԱ



Հայաստանի տարածքն աչքի է ընկնում նաև խոցելի էկոհամակարգերի առատությամբ: Ընդհանուր առմամբ, Հայաստանի տարածքում առավել ակնառու են անապատացման գործընթացները: Հանրապետությունում նաև պարբերաբար գրանցվում են տարաբնույթ աղետներ: Ագրոկենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունը հիմնականում կապված է մարդածին և բնական գործոնների հետ:

Մարդու ակտիվ գործունեության բացասական ազդեցությունը ագրոկենսաբազմազանության վրա հայտնի է դեռ վաղ ժամանակներից: Հատվել են անտառները, արհեստականորեն ընդարձակվել են արոտներն ու խոտհարքները, հերկվել են տափաստանային և կիսաանապատային լանդշաֆտները, ավելացել են ոռոգելի հողատարածությունները, և բնական պոպուլյացիաների ու բուսական համակեցությունների վրա մարդածին ազդեցությունը հասել է տագնապալի չափերի: Բացի այդ՝ վերջին տարիներին երկրի սոցիալ-տնտեսական անկայուն վիճակի արդյունքում տեղի ունեցավ մարդածին բացասական ազդեցության ավելացում (անտառների հատում, արոտների գերարածեցում. ուստի խոտաբույսերի, դեղաբույսերի, պտուղների, հատապտուղների ոչ կանոնակարգված հավաք, հողերի սեփականաշնորհում և այլն), որի ընթացքում առավել վտանգի ենթարկեցին բնակավայրերին հարակից բնական անտառները և կերհանդակները:

Բնական գործոնների բացասական ազդեցությունն արտահայտվում է կլիմայի գլոբալ փոփոխության, համընդհանուր տաքացման և դրա հետևանքով առաջացած գործընթացների արդյունքում:

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ



Վերջին 20 տարիների ընթացքում գերխնդիր է հանդիսանում կլիմայի փոփոխությունը, որն էլ չի կարող խուսափել նաև Հայաստանում, հատկապես, երբ մասնագետների հաշվարկով ջերմաստիճանը Հայաստանում, 20-րդ դարի սկզբի համեմատ, արդեն բարձրացել է 0,850C-ով: Կլիմայի փոփոխությունը և փոփոխականությունը հանգեցնում է կենսաբազմազանության վրա ազդող համամոլորակային նոր մարտահրավերների: Տարածքային համապատասխանության մոդելների կիրառմամբ հաստատվել է, որ աճող ջերմաստիճանը և տեղումների փոփոխվող քարտեզները կարող են էապես փոխել գյուղատնտեսական համակարգերը, որի արդյունքում գյուղական տնտեսությունները ստիպված կլինեն ամբողջովին անցնել նոր սորտերի կամ նոր մշակաբույսերի կիրառմանը:

Ցանկացած տարածքում գյուղատնտեսական համակարգերը կլիմայի փոփոխությանը հարմարեցնելու համար անհրաժեշտ է՝

- սորտային կազմի վերանայում և նոր սորտերի ընտրություն
- եղած սորտերի ադապտացում սելեկցիայի ճանապարհով

մշակաբույսերի փոխարինում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ



Առավել մտահոգիչ է բաց եղանակով հանքերի շահագործումը անտառային տարածքներում, որի վառ օրինակը Թեղուտում պղնձամոլիբդենային հանքի առկայությունն է, այն գտնվում է ՀՀ Լոռու մարզի հյուսիս-արևելյան շրջանում՝ երկրաշարժերի և սողանքների ենթակա գոտում: Անտառների ոչնչացմանը հաջորդել է կտրված ծառերի արմատային համակարգի փտումը, որի հետևանքով մարգում ակտիվացել են էրոզիոն և սողանքային երևույթները: Թեղուտի մերձակա անտառը Հայաստանում ամենալավ պահպանվածն է՝ հարուստ կենսաբազմազանությամբ, այդ թվում՝ շուրջ 200 բուսատեսակով, կաթնասունների 55, թռչունների 86, սողունների 10 և երկկենցաղների 4 տեսակներով: Այս բուսա և կենդանատեսաներից շատերը հազվադեպ հանդիպող են և համարվում են վտանգված, իսկ 6 բուսատեսակ և 26 կենդանատեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Այս տարածքում բաց հանքի շահագործումը բնականաբար նախատեսում է անտառների հատման աշխատանքներ, պոչամբարների կառուցում, նոր ենթակառուցվածքների ստեղծում: Նշված գործողությունների հետևանքները կարող են կործանարար լինել էկոհամակարգերի և կենսաբազմազանության համար:

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԾԱՌՆԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Որպես արոտավայր, օգտագործվող բնական էկոհամակարգերի համար առավել մեծ վտանգ է ներկայացնում արոտավայրային ծանրաբեռնվածության



անհավասարաչափ բաշխումը: Ընդ որում՝ հեռավոր արոտավայրերի թերաբաժեցման պատճառով տեղի է ունենում էկոհամակարգերի փոփոխություն, մասնավորապես՝ ալպյան գորգերը փոխարինվում են ալպյան մարգագետիններով, իսկ մերձալպյան մոլախոտերը ակտիվ ներխուժում են ալպյան էկոհամակարգեր: Փոխարենը մեծացել է գյուղամերձ արոտների ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում ակտիվացել են բուսական ծածկույթի փոփոխությունները, էրոզիայի օջախների առաջացումը, սողանքներն ու սելավները: Գերաբաժեցման արդյունքում կարող են տուժել նաև ՀՀ Կարմիր գրքում ներառված տեսակները: Բնական կերհանդակների բազմամյա ոչ արդյունավետ օգտագործման և խնամքի բացակայության հետևանքով՝ դրանց մի մասը ենթակա չէ օգտագործման: Ներկայումս այստեղ նկատվում է ջրային էրոզիայի ակտիվացում, ճահճուտների ընդարձակում: Կենսաբազմազանության համար մեծ կարևորություն ունեցող արոտավայրերի պահպանությունը պետք է կենտրոնացվի դրանց կանոնակարգված արդյունավետ օգտագործման, նոր տեխնոլոգիաների մշակման, արոտավայրային հողերի էկոլոգիական վիճակի գնահատման ու բարելավման, գործնական սելեկցիայում նոր կերային բազմամյա խոտաբույսերի ստացման համար տեղական ֆլորայի լայն կիրառման վրա:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԱՏՈՒՄ



Անտառհատումների արդյունքում ավելի ինտենսիվ է ընթանում անտառի կազմի ոչ ցանկալի փոփոխություն՝ տնտեսապես ավելի բարձրարժեք կաղնու և հաճարենու փոխարինում է համեմատաբար ցածրարժեք բոխին: Բնականաբար՝ առկա է նաև անտառի նոսրացում: Անտառների հատումը, բացի ակնառու վտանգից, հանգեցնում է անտառի ստորին գոտու տեսակների անհետացմանը: Անտառների հատումը նպաստում է նաև թթվածնի քանակի պակասեցում, որն էլ իրեն հերթին, տարիների ընթացքում բերում է մեծ աղետների:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ



Բնաշխարհին զգալի վնաս են հասցնում նաև անկազմակերպ զբոսաշրջությունը, բուսական պաշարների (դեղաբույսեր, սնկեր և այլն) չկարգավորված հավաքն ու օգտագործումը, որոնց հետևանքով զանգվածաբար ոչնչանում են բուսական ու կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ, շրջակա միջավայրն աղտոտվում է կենցաղային աղբով և այլն: Այս խնդիրների լուծման ամենաարդյունավետ եղանակներից մեկը բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության բարելավումն է, մարդկանց մեջ բնական միջավայրի հանդեպ հոգածու վերաբերմունքի մշակումը: Կենսաբազմազանության փոփոխությունները հիմնականում առաջանում են հողերում վնասակար քիմիական նյութերի կուտակման, ստորերկրյա ջրերի և գետերի աղտոտման, արդյունաբերական թափոնների կուտակման և լանդշաֆտների դեգրադացման պատճառով, ինչը առաջացնում է տեսակների աճի, զարգացման և վերարտադրության պայմանների խախտում, անտառային էկոհամակարգերում արժեքավոր, անհետացող և հազվագյուտ տեսակների ոչնչացում, ագրոցենոզների բերքատվության անկում, բերքի որակի վատթարացում

ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բույսերի գենետիկական ռեսուրսների կենսաբազմազանության պահպանության կարևոր միջոց, հնարավորություն է ընձեռում վերականգնել բնական աղետների կամ մարդկային գործոնի հետևանքով վտանգված կամ ոչնչանցված ռեսուրսները՝ միաժամանակ հետազոտողներին և ֆերմերներին տրամադրելով դրանցից մշտապես օգտվելու հնարավորություն: Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի գիտական հաստատություններում ներկայումս պահվում են սերմերի հավաքածուների մոտ 13220 նմուշներ: Գենետիկական բանկում պահվում են երկրի համար առաջնային համարվող գյուղատնտեսական մշակաբույսերը և դրանց վայրի ազգակիցները, առաջնությունը տրվում է տեղական ծագում ունեցող մշակաբույսերին:



Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայում պահվում են վայրի ցորենի, գարու, աշորայի, այծակնի, վայրի բանջարային բույսերի (ճակնդեղ, գազար, սոխ, սպանախ, հազար, ծնեբեկ, խավրժիլ, ծովաբողկ և այլն), համեմունքային (գինձ, մաղադանոս, կոտեմ, ցիտրոն և այլն), հատիկաբլիթներ (տափուր, ոսպ, վիկ, երեքնուկ, առվույտ) սերմեր: 2011թ-ից հիմնվել է ծիրանենու կոլեկցիոն այգի, որը բաղկացած է ծիրանենու հայկական 82 և արտերկրից ներկրված 12 սորտերից, որոնք առավել մեծ պահանջարկ ունեն եվրոպական շուկայում: Ծիրանենու կոլեկցիոն այգու ստեղծման նպատակն է

պահպանել Հայաստանի ծիրանենու յուրահատուկ գենոֆոնդը, միաժամանակ հնարավորություն ստեղծելով արդյունավետ օգտագործելու ծիրանենու տեղական ծագման և արտերկրի գենետիկական ռեսուրսները: Կենդանի բույսերի հավաքածուները կազմում են բուսաբանական այգիների ու դենդրոպարկերի հիմքը: Ներկայումս Հայաստանի բուսաբանական այգիներում և դենդրոպարկերում աճեցվում և պահպանվում են շուրջ 6000 բուսատեսակ, այդ թվում՝ 5000 Երևանի բուսաբանական այգում, որտեղ բաց գրունտում աճող շուրջ 1200 տեսակ ծառաթփային և մոտ 2000 տեսակ ծաղկային բույսերից բացի, ջերմատնային պայմաններում պահպանվում են արևադարձային և մերձարևադարձային բույսերի շուրջ 1000 տեսակ:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոլոգիայի Բնապահպանության (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):